

ջապէս եմէ նոյն դասագիրքը տաճկաստանի բարբառով գրուած լինելու վերայ է ձեր խնդիրը, այդ ևս մի փաստ է նորա արժէքը կոտորելու համար. որովհետեւ այս օրուան օրս կան հազարաւոր գրքեր նոյն լեզուով տպուած, մի՞թէ բոլորն ևս անհասկանալի են Ռուսաստանցի Հային: Զեմ՝ խօսում Թաշքենանի դասագրքի՝ ձերի վերաբերութեամբ ունեցած և այն առաւելութիւնների վերայ՝ որ շարականների միջնորդութեամբ կարող է ուսուցանել ուշադիր աշակերտին մինչ անգամ և երգերի գրութիւն, որից դուրկ է ձեր խառնափնթոր աներեւոյթ և անպատրաստ դասագիրքը:

Վերջացնելով խօսքս՝ առանց մի զիտողութիւն անելու այս անգամ դասագրքիդ և երգարանիդ վերայ, սոյն յօդուածիս հետ բարեոք եմ համարում անմիջապէս կցել և հրատարակել Պ. Թաշքենանի ինձ գրած մի նամակն, որի մէջ բարեմիտ ընթերցողը կնկատէ թէ որքան անձիշտ և անստոյգ էին դոցա վերաբերութեամբ գրուած առաջին երկու յօդուածներդ, և որքան սուտ և սխալ պիտի լինին թէ յետոյ գրել բարեհաճէք:

ՍԱՀԱԿ ՍԱՐԿԱՆԱԴ.

• Երբարտայ մէջ Եզնիկ Քահանայի յօրինած Երգարանին նկատմամբ Ձեր քննադատական մի յօդուածն կարգացի, և երկու կողմանց առանց զիտողութիւն մը կտրենալ ընելու ցանկացայ տեսնել զայն. Մեծապէս շնորհակալ եմ տեղւոյդ Յովակիմեան Ղևոնդ Վարդապետէ՝ որ հաճեցաւ զրկել մեզ թէ երգարանն և թէ դասագիրքն, Բաղդասելով երգարանն յօդուածոյդ հետ, շատ իրաւացի գտայ Ձերդ քննադատութիւնը՝ թէ և շատ հարեանցի անցած էիք: Քննեցի այս երկու գործ և ես ուշի ուշով, բայց շիտակը բնիլս համար շատ ցաւեցայ, զի ոչ դասագիրքն և ոչ երգարանն երգարան կոչուելու արժանաւորութիւնն ունէր. դասագրքին մէջ աւանգած դասերուն կանոններուն և օրինակներուն բացատրութիւնն հայկականէ և Եւրոպականէ խառն լինելով, ոչ հայկական ձայնագրութեան դասագիրք ըլլալն կրցի իմանալ և ոչ Եւրոպական. լաւ կընէր որ յառաջ քան զտպագրութիւն իրմէ աւելի յառաջադէմ ընկերակցածը, և կամ հմտագունից զիտողութեանցը յանձնէր, և կամ ուղղակի մեզ զիմելով մեր քննութեանն ներկայէր, միթէ պէտք եղած աջակցութիւնն, և երկու երաժշտութեանց նկատմամբ արհեստական ընդարձակ տեղեկութիւնք տալու պիտի զլանայի՞ . . . քաւ լիցի . . . ալ աւելի պիտի ուրախանայի, և յայնժամ աշխատասիրածն ձեռնարկ մի կատարեալ դործ լինելով փառքն ու պատիւ ինքն պիտի վաստկէր. բայց ահա թէ ի՞նչ կասէ իւր յառաջարանին մէջ, « Թէպէտ ունիմք մի դասագիրք ձայնագրութեան, որ աշխատասիրել է Պ. Ն. Թաշքենանը, բայց զաշատ համառօտ և այլն լինելու պատճառաւ, այլքան մատչելի է որքան որ պահանջվումէ, մանաւանդ ծխական դպրոցների վերաբերութեամբ, այս մասին դուք ևս կվկայէք » . կարծեմ բերանը պիտի ծռէր երբ Պ. Ն. Թաշքենան տեսէն յետոյ՝ ասելու նաև թէ իմ դասատուն, կամ մեր

դասատուն և ընդ անոց ոչ թէ մեզ մեծարած և պատուած պիտի լինէր այլ քաղաքավարական և հրախտադիտական մի պարտք կատարած պիտի լինէր։ Մեր դասագիրքն «Համառօտ» մատչելի չէ և ընդ կանուանէ. սոցիք է որ իմ դասագիրք Համառօտ է բայց ինչպէս գիտէք՝ այդ տեղ եղած ժամանակս՝ պարագաներն և իմ սուղ միջոցս չէին ներէր՝ որ ընդարձակն յորինելու հայկական մի Համառօտ դասագրքի պէտքն զգացուելով զայն յորինեցի և որուն մէջ ոչ Եւրոպական ձայնագրութեամբ, Եւրոպական եղանակաւ ազգային երգեր ուսուցանելու կանոններ կաւանդուէր և ոչ մանկական երգեր ուսուցանելու նպատակաւ էր յորինուած. այլ Հայկական եղանակք և նորա Համառօտ կանոններն ու թն ձայնից վերայ. ուստի Հարկ չկար ըսելու թէ «այնքան մատչելի չէ» Համառօտ և ընդ է և ասով Հարկաւ իմ դասագիրքը հրատարակի վերայ պարսաւելու նպատակաւ։

• Գեր. Ասահբաւ. Եպիսկոպոսի կողմանէ ինձ խրկուած նորա մի երգն զոր սխալ ձայնագրեր էր սրբագրելով խրկելէս ի վեր է որ նամակաց յարաբերութիւնը դադրեցուց, թէ և շատ նամակներ գրեցի իրեն. բայց և ոչ մէկին պատասխանեց. յայնժամ իմացայ նորա ամբարտաւան և ևս սական Հպարտ ոգին։

• Դասագիրքն Հայկական կանուանէ և փոխանակ նորա Հիմնական կանոններին և եղանակաց սկզբնական իրեւջն աւանդելու և ուսուցանելու Եւրոպական եղանակաց կանոններ կաւանդէ սխալ և ծուռ մեկնութեամբ և բացատրութեամբ՝ ելեւէջի կողմից և կիսաձայնից սխալ կազմակերպութեամբ։

• Դասագիրքն Հայկական կանուանէ, բայց փոխանակ Եւրոպական և Հայկական երաժշտութեանց ձայնից փոխադրութիւնը գիտաւոր և առանց Հայկական և Արեւելեան եղանակաց կազմութեանը վերայ լու գաղափար և հմտութիւն ունենալու, Բնութեան և Բնութեան աշխարհութեան իմաստակորէն և խեղճը Հայկականի քնն Եւրոպականի քնն ըլլալ կկարծէ. զի քնն ոչ թէ Եւրոպականի քնն է, այլ բն է։

• Դասագիրքն Հայկական կանուանէ և Եւրոպական իրեւջի երեքից քառիակն և եօթնեկից ութնեակն կաւանդէ, օրինակ ցոյց տալու առին նոյն կանոնին դէմ կմեղանչէ։

• Դասագիրքն Հայկական կանուանէ, իսկ Եւրոպական չափեր կուսուցանէ և մի քանի չափ Եւրոպական կարծելով նոցա չափից թուոյն վերայ կաւելացնէ։

• Եթէ դասագրքին միջոցաւ ազգային երգեր պիտի ուսուցանէր, ի՞նչ Հարկ կար իւր չգիտցած Եւրոպական ձայնագրութեամբ Եւրոպականի կանոններ աւանդելու յանդգնել, կարծի էր Հայկականի կանոններով ազգային երգեր ուսուցանել, Աերջապէս դասագիրքը Հայկական կանուանէ, բայց Հայկական ձայնագրութեան պատրուակի տակ սխալ և հակահական բացատրութեամբ Եւրոպական եղանակներ կաւանդէ, ըսածն չհասկնալով և դասական ամբողջ պարունակութիւնը մի միայն է ձայնաստիճանի վերայ

կհիմնէ սխալ ձայնագրելով և ուղիղ երգելով, այսինքն թէ երկու անգամ երկուքն վեց կանէ ըսելով կաւանդէ և կգրէ, իսկ կարդացած ժամանակ՝ 4 կըկարդայ:

«Թէ դասագրքին և թէ մանկական երգարանին մէջ սխալ ձայնագրած և ուղիղ երգած երգերն եթէ գործնականի վերայ առնելով երգէր, յայնժամ պիտի տեսնէր թէ երգած երգին ձայնէր իւր կազմած ելեւէջով ուրիշ եղանակի ձև կառնէին:

«Արդ, սիրելիդ իմ Տիրացու Սահակ, դեռ Եւրոպական ձայնագրութեան այբը չճանաչող մի անձն կերթայ հրապարակ կելլէ և զինքը երկու ձայնագրութեանց հմուտ ձևացնելով մինչև իսկ մեր դասագրքին ալ չհաւանիր, և դասագիրքին համ ու հոտ չունեցող մի անպիտան բան կշինէ իմաստակօրէն, կհարցնեմ թէ այսպիսին պէտք չէ՞ որ պատժուի հրապարակաւ իւր արժանիքն ցոյց տալով իրեն. այս մասին Ձեզ պարտաւոր կընեմ. և եթէ դուք լռէք, Նորա սխալ գրութիւնը ընդունած պիտի ըլլաք, և յայնժամ ես պիտի պարտաւորեմ ցաւօք սրտի իջնել հրապարակ, եթէ պէտք լինի մինչև իսկ տեղւոյդ լրագրաց միջոցաւ իսկ ցուցնել նորա եղծումներն և իմաստակութիւնքն զօրաւոր արհեստական փաստերով:

«Նամակիս պատասխանն շուտով գրես ինձ, որ եթէ պէտք լինի՝ իւր հակասութիւնքն մի առ մի գրեմ ձեզ»:

Ն. Ս. ԹԱՇԱԵԱՆ.

43 Մայիսի 1881 թ.

Յուսումնարան դպրաց դասու աւագ եկեղ. Բուժքաբույի.

Կոստանդնուպօլիս:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Տ. Ե. Ս. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Մայիսի 21 ին փառաւոր և արժանաւայել հանդիսով տօնուեցաւ Ս. Էջմիածնում՝ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Օծման Ժ. Գ. տարեգարձը: Նախընթաց երեկոյեան մեծահանդէս նախատօնակ կատարուեցաւ: Տարեգարձի օրը առաւօտեան ժամերգութիւնից յետոյ՝ ժամը 8ին միաբանական Ս. Ուխտը Գէորգեան ճեմարանի, ժողանդաւորաց ուսումնարանի և Վաղարշապատու երկսեռ դպրոցաց ուսանողներին, ուսուցիչներին և ժողովրդեան հետ միասին հրաւիրեցան սովորական Մաղթանքը կատարելու բազմերախտ Հայրապետի Սրբազան կենաց համար: Հանդէսը սրտաուռ չէր: Մաղթանքից յետոյ կարդացուեցան չափածոյ ուղերձ Գ. Ճեմարանի սանունը կողմնէ և քանի մի ճառեր Վաղարշապատու երկսեռ Դպրոցաց ուսանողներին կողմից: Մաղթանքից յետոյ միաբանական Ուխտը ուսանողները իւրեանց ուսուցիչներով և համայն ժողովուրդը մատան ի համբոյր Ս. Աջոյ Վեհափառ Հայրապետի:

Վեհափառ Հայրապետը իւր բարեմաղթական և խրատական քաղցր խօսքերի մէջ արտասանեց և այս մի քանի իմաստալից խօսքերը. «Եւրօքանչիւրքս ըստ իւրում կարգի և աստիճանի ծառայենք մեր Ս. Եկեղեց.